ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՆԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Վանաձոր համայնք
Ք. Վանաձոր, Տիգրան Մեծի 22, lori.vanadzor@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

14 դեկտեմբերի 2022 թվականի N 28

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՅՆՔՆԵՐԻ ՏՆՏԵՍԱԿԱՆ ԵՎ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ԵՆԹԱԿԱՌՈՒՑՎԱԾՔՆԵՐԻ ԶԱՐԳԱՑՄԱՆՆ ՈՒՂՂՎԱԾ ՍՈՒԲՎԵՆՑԻԱ ՍՏԱՆԱԼՈՒ ԵՎ «ՎԱՆԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ԳԼԽԱՎՈՐ ՓՈՂՈՑՆԵՐԻ ԼՈՒՍԱՎՈՐՈՒԹՅԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ ԱՐԴԻԱԿԱՆԱՑՈՒՄ» ՍՈՒԲՎԵՆՑԻԱՅԻ ՀԱՅՏԻՆ ՀԱՄԱՁԱՅՆՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 25-րդ կետով և Հայաստանի Հանրապետության կառավարության 2006 թվականի նոյեմբերի 16-ի թիվ 1708-Ն որոշմամբ՝ Վանաձոր համայնքի ավագանին ***որոշում է.***

1. Տալ համաձայնություն Հայաստանի Հանրապետության համայնքների տնտեսական և սոցիալական ենթակառուցվածքների զարգացմանն ուղղված «Վանաձոր համայնքի գլխավոր փողոցների լուսավորության համակարգի արդիականացում/» սուբվենցիայի հայտին՝ համաձայն հավելվածի:

2. Ծրագրի արժեքը սահմանել 180 063 000 ՀՀ դրամ (100%) (հարյուր ութսուն միլիոն վաթսուներեք հազար) Հայաստանի Հանրապետության դրամ, որից 81 028 350 դրամ (ութսունմեկ միլիոն քսանութ հազար երեք հարյուր հիսուն) (45%) Հայաստանի Հանրապետության դրամ, համաֆինանսավորման տեսքով ներդնում է համայնքը՝ Վանաձոր համայնքի 2023 թվականիբյուջեի 06 բաժնի 4-րդ խմբի 1-ին դասի գործառնական դասակարգման 5113 /Շենքերի և շինությունների կապիտալ վերանորոգում/ հոդվածից:

3. Ծրագրի իրականացման հետ առնչվող այլ փաստաթղթերի ստորագրումը, դրանցից բխող գործառույթների կազմակերպումն իրականացնում է Վանաձոր համայնքի ղեկավարը:

ԿՈՂՄ (18)		ԴԵՄ(0)		ՁԵՌՆՊԱՀ (0)
Ա. Փելեշյան		Վ. Օհանյան		—
Ա. Բերնեցյան		Լ. Թադևոսյան		
Ա. Դեմիրխանյան		Վ. Մկրտչյան		
Կ. Դավթյան		Հ. Մանուկյան		
Հ. Խլոպուզյան		Գ. Հարությունյան		
Ա. Ալավերդյան		Ա. Հարությունյան		
Ք.Ալաբերքյան		Ն. Հովհաննիսյան		
Գ. Քալանթարյան		Դ. Խաչատրյան		
Ա. Ղամբարյան		Է. Մարգարյան		

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ՝ **ԱՐԿԱԴԻ ՓԵԼԵՇՅԱՆ**

2022 թ. դեկտեմբերի 14
ք.Վանաձոր